Հայտարարություն

Սանկտ-Պետերբուրգում կայանալիք ձկնարտադրության ֆորումի և ցուցահանդեսի մասին

2017թ սեպտեմբերի 14-ից 16-ը Սանկտ-Պետերբուրգ քաղաքում տեղի կունենա Ռուսաստանի ձկնարտադրության առաջին ֆորումը և Ձկնարտադրության, ծովամթերքների ու տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսը:

Ֆորումին և ցուցահանդեսին մասնակցելու համար հրավիրվում են կազմակերպություններ և պատվիրակություններ ավելի քան 50 երկրներից:

Ցուցահանդեսին իրենց արտադրանքը կներկայացնեն աշխարհի մոտ 200 առաջատար ընկերություններ, այդ թվում՝ ձկնաբուծական, վերամշակող կազմակերպություններ, նավաշինական գործարաններ, ձկնարդյունաբերության համար նախատեսված սարքեր և կից սարքավորումներ արտադրողներ, ինչպես նաև լոգիստիկ, առևտրային և այլ ընկերություններ:

Ֆորումի ընթացքում նախատեսվում է քննարկել ձկնաբուծության համաշխարհային շուկային և Ռուսաստանի Դաշնության ձկնարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարությանն առնչվող հարցերը, ինչպես նաև միջազգային առևտրատնտեսական կապերի և գիտատեխնիկական համագործակցության ընդլայնման հնարավորությունները: